

Իրավաբանական անձի պետական գրանցման

ՎԿԱՅԱԿԱՆ N 03Ա1095410

Իրավաբանական անձի անվանումը
«ՀԵՆԱՐԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԳՐԱՄ

Գրանցված է Պետական ռեգիստրի
Կենտրոնական մարմնի կողմից

Գրանցման համարը 222.160.945410

Գրանցման ամսաթիվը 2017-02-09

Իրավաբանական անձի ծածկագիր(կոդը) 50328324

Հարկ վճարողի հաշվառման համար 00162849

Ապահովադրի ծածկագիր 165410

Իրավաբանական անձի տեսակը ոչ առևտրային

Գործունեության ժամկետը անժամկետ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ



Վկայական ուժի մեջ է միայն ներդիրի հետ միասին

ՆԵՐԴԻՐ 001

Իրավաբանական անձի պետական գրանցման
N 03Ա1095410 վկայականի

Իրավաբանական անձի անվանումը «ՀԵՆԱՐԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԻՄՆԱԳՐԱՄ

Գտնվելու վայրը ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆ / Շ / 15 / 19 ԱՐԱԲԿԻՐ 0051 ԵՐԵՎԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ

Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար, Գործադիր տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար՝ ՀՈՒՓՄԻՄԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԱՇԽԿԻ

անձնագիր AK0504910, տրվ. 2010-05-14, 004 կողմից,

հասցե ԶԱՐՅԱՆ Փ. / Շ / 15 / 19 ԱՐԱԲԿԻՐ 0051 ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Այլ տեղեկություններ



ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

"09" 02 2017 թ.

Ներդիրն ուժի մեջ է միայն վկայականի հետ միասին

Կազմված է «10» հունվարի 2017թ.
Բաղկացած է 10 թերթից

Տպագրված է ընդամենը 3 օրինակ
Օրինակ N 4

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

«ՀԵՆԱՐԱՆ» բարեգործական հիմնադրամի
հիմնադիրների
2017թ. հունվարի 10-ի N_001 որոշմամբ

Հայաստանի Հանրապետության
Իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից

Հիմնադիրներ՝


« 09 » 02 . 2017թ.

 Արթուր Արմենակի Ավետիսյան

Գրանցման համարը 222.160.945410

Վկայական 03 և 1095410

ՀՎՀՀ 00162849

 Հոփսիսիմե Աշիկի Մարտիրոսյան

Պետական ռեգիստրի գործակալության պետ՝



Գ. Դավթյան

«ՀԵՆԱՐԱՆ»

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան – 2017թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 «ՀԵՆԱՐԱՆ» բարեգործական հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) իր հիմնադիրների կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է սոցիալական, առողջապահական, բարեգործական, կրթական, հանրային իրազեկման, տեղեկատվական, մշակութային և այլ հանրօգուտ նպատակներ:
- 1.2 Հիմնադրամը հիմնադրվել է 2017թ. հունվարի 10-ին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան և գործում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ միջազգային պայմանագրերի, այլ օրենքների և իրավական ակտերի և սույն Կանոնադրության համաձայն:
- 1.3 Հիմնադրամի պաշտոնական անվանումն է՝ հայերեն՝ «ՀԵՆԱՐԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾՄԱՍԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ, ռուսերեն՝ БЛАГОТВОРИТЕЛЬНЫЙ ФОНД «ОПОРА», անգլերեն՝ “RELIANCE” CHARITABLE FOUNDATION:
- 1.4 Հիմնադրամի գտնվելու վայրը (փոստային հասցեն)՝ **ք. Երևան, Նաիրի Զարյան 15, բն. 19, 0051:**
- 1.5 Հիմնադրամի հիմնադիրներն են ֆիզիկական անձ հանդիսացող ՀՀ քաղաքացիներ՝

Անուն, ազգանուն	Ծննդյան թիվ	Անձնագրի համար	Ստացել է	Հասցե
Արթուր Ավետիսյան				
Հռիփսիմե Մարտիրոսյան				

- 1.6 Հիմնադրամը ստեղծված է համարվում և ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից: Հիմնադրամը ստեղծված է **անժամկետ** և գործում է Հայաստանի Հանրապետության տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:
- 1.7 Հիմնադրամը գործում է օրինականության, կամավորության, ինքնակառավարման և հրապարակայնության սկզբունքներով:
- 1.8 Հիմնադրամն իրավաբանական անձ է և ունի հիմնադիրների գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում: Հիմնադիրների կողմից Հիմնադրամին հանձնված գույքը Հիմնադրամի սեփականությունն է, որը Հիմնադրամն օգտագործում է իր Կանոնադրությամբ սահմանված նպատակներով:
- 1.9 Հիմնադիրները պատասխանատվություն չեն կրում Հիմնադրամի պարտավորությունների համար, իսկ Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում իր հիմնադիրների պարտավորությունների համար:
- 1.10 Հիմնադրամի հիմնադիրները համապարտ պատասխանատվություն են կրում մինչև հիմնադրամի պետական գրանցումը ծագած՝ նրա ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:
- 1.11 Հիմնադրամն ինքնուրույն է որոշում իր գործունեության ծրագրերը:
- 1.12 Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է իր մարմինների միջոցով: Հիմնադրամի մարմիններն են՝ Հոգաբարձուների խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ) և Գործադիր տնօրեն (այսուհետ՝ Տնօրեն): Հիմնադրամի հիմնադիրներից յուրաքանչյուրը կարող է միաժամանակ լինել միայն մեկ մարմնի անդամ:

2. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ

- 2.1. Հիմնադրամի շահառուներն են ուռուցքային հիվանդություններով տառապող մարդիկ և նրանց ընտանիքների անդամներն ու խնամողները:
- 2.2. Հիմնադրամի նպատակն է աջակցել ուռուցքային հիվանդություններով տառապող մարդկանց, ուռուցքային հիվանդությունների և դրանց հնարավոր կանխարգելման մասին

հանրային իրազեկվածության բարձրացմանը, ուռուցքային հիվանդությունների բնագավառում գործող հաստատությունների կարողությունների հզորացմանը:

2.3. Հիմնադրամի խնդիրներն են՝

2.3.1. Կազմակերպել սոցիալ-հոգեբանական, հոգեուռուցքաբանական, իրավաբանական օգնություն ուռուցքային հիվանդություններով տառապողներին և նրանց ընտանիքների անդամներին ու խնամողներին:

2.3.2. Նպաստել ՀՀ-ում կրծքագեղձի քաղցկեղի մամոգրաֆիկ սկրինինգի ներդրմանը՝ համագործակցելով առողջապահության ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի, ապահովագրական ընկերությունների, միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև այս բնագավառում բարեգործական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ:

2.3.3. Բարձրացնել ՀՀ-ում ուռուցքային հիվանդությունների, հատկապես կրծքագեղձի քաղցկեղի խնդրի մասին հասարակության իրազեկվածության մակարդակը:

2.3.4. Նպաստել քաղցկեղային և նախաքաղցկեղային հիվանդությունների վերաբերյալ գրականության ստեղծմանն ու տպագրությանը, կլինիկական ուղեցույցների կազմմանը, արտասահմանյան կլինիկական ուղեցույցների թարգմանությանն ու տպագրությանը:

2.4. Իր առջև դրված նպատակների արդյունավետ կատարումն ապահովելու համար Հիմնադրամը բարեգործական հիմունքներով ներգրավում է միջոցներ, համագործակցում է Հայաստանի Հանրապետության և արտերկրի պետական մարմինների, առևտրային ու հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների, միջազգային կազմակերպությունների հետ, իրականացնում է ծրագրեր և այլ միջոցառումներ:

2.5. Հիմնդրամը ստեղծման պահին անձամբ ձեռնարկատիրական գործունեությամբ չի զբաղվում: Անհրաժեշտության դեպքում Հիմնադրամն անձամբ ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել իր հետագա գործունեության ընթացքում: Հիմնադրամը կարող է իրականացնել օրենքով չարգելված, միայն իր Կանոնադրությամբ սահմանված ցանկացած, այդ թվում նաև՝ տնտեսական գործունեություն: Հիմնադրամը կարող է զբաղվել ձեռնարկատիրական ցանկացած տեսակի գործունեությամբ՝ միայն այն պայմանով, որ նման ձեռնարկատիրական գործունեությունը ծառայի այն նպատակների իրականացմանը, որոնց համար ստեղծվել է Հիմնադրամը: Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Հիմնադրամը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում:

3. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

3.1. Հիմնադրամի իրավունակությունը ծագում է նրա պետական գրանցման պահից և դադարում է լուծարման ավարտի պահից:

3.2. Հիմնադրամն ունի ՀՀ օրենսդրությամբ իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքները և կրում է համապատասխան պարտականություններ:

3.3. Հիմնադրամն իրավունք ունի իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

3.4. Հիմնադրամն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով:

3.5. Հիմնադրամը կարող է ունենալ իր անվանումը պարունակող կլոր կնիք (հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով), խորհրդանիշ, դրոշմներ, ձևաթղթեր, տիտղոսաթերթեր, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային, առևտրային և այլ նշաններ ու անհատականացնող այլ միջոցներ:

3.6. Հիմնադրամն իր Կանոնադրության նպատակներին համապատասխան իրավունք ունի՝

3.6.1. անարգել տարածել տեղեկություններ իր գործունեության մասին,

3.6.2. հիմնադրել մամուլի և զանգվածային լրատվության միջոցներ,

- 3.6.3. պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից օրենքով սահմանված կարգով ստանալ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար,
- 3.6.4. ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ, ակումբներ, հանձնաժողովներ և այլ կառույցներ,
- 3.6.5. ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակից,
- 3.6.6. կնքել ՀՀ օրենսդրությամբ չարգելված գործարքներ,
- 3.6.7. օրենքով սահմանված կարգով ձեռք բերել, ստանալ, վարձակալել կամ այլ պայմաններով, այդ թվում նաև անվճար, օգտագործել անշարժ գույք, հիմնական միջոցներ, օրենքով չարգելված գույք,
- 3.6.8. օտարել կամ վարձակալության և անվճար օգտագործման հանձնել Հիմնադրամին պատկանող ցանկացած շարժական և անշարժ գույք,
- 3.6.9. ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ ստանալ վարկեր, փոխառություններ, դրամաշնորհներ, հանգանակություններ, ձեռք բերել գույքային և ոչ գույքային իրավունքներ, տիրապետել և տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտները,
- 3.6.10. օրենքով սահմանված կարգով ստանալ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար,
- 3.6.11. իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն:
- 3.7. Հիմնադրամը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և իր Կանոնադրությանը համապատասխան, կարող է անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ պետական կազմակերպություններին:
- 3.8. Հիմնադրամը սույն Կանոնադրությանը համաձայն սեփականատիրոջ իրավունքով իրականացնում է իր հաշվեկշռում առանձնացված գույքի տնօրինումը, օգտագործումը և տիրապետումը: Հիմնադրամն իր պարտավորություններով պատասխանատվություն է կրում այն գույքով, որի վրա օրենքով սահմանված կարգով կարող է բռնագանձում տարածվել:
- 3.9. Հիմնադրամի հիմնադիրները կարող են միաձայն որոշմամբ փոփոխություններ մտցնել Հիմնադրամի Կանոնադրության մեջ: Հիմնադրամի Խորհուրդը կարող է անդամների ընդհանուր թվի ձայների 4/5 մեծամասնությամբ ընդունված որոշմամբ փոփոխություններ մտցնել Հիմնադրամի Կանոնադրության մեջ: Կանոնադրության այդ փոփոխությունները չեն կարող վերաբերել Հիմնադրամի նպատակներին կամ շահառուներին: Եթե Կանոնադրության փոփոխությունները պետք է վերաբերեն Հիմնադրամի նպատակներին կամ շահառուներին, ապա փոփոխություններ կատարելու իրավունքն իրականացնում է դատարանը՝ Հիմնադրամի մարմինների կամ հիմնադիրներից մեկի կամ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի համաձայն ստեղծված հոգաբարձուների ժամանակավոր խորհրդի ղեկավարի հիման վրա:
- 3.10. Հիմնադրամն իր կամքով և իր շահերից բխելով ձեռք է բերում և իրականացնում քաղաքացիական իրավունքներ: Հիմնադրամն ազատ է պայմանագրի հիման վրա սահմանելու իր իրավունքներն ու պարտականությունները, սահմանելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:
- 3.11. Հիմնադրամի իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով: Հիմնադրամն ունի օրենքով չարգելված բոլոր եղանակներով իր քաղաքացիական իրավունքների պաշտպանության իրավունք:

4. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 4.1. Հիմնադրամը պարտավոր է՝
 - 4.1.1. գործել ՀՀ Սահմանադրությանը, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքին, այլ օրենքներին և իրավական ակտերին, ինչպես նաև Հիմնադրամի Կանոնադրությանը համապատասխան,
 - 4.1.2. օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում,

- 4.1.3. օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին,
- 4.1.4. իրականացնել «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:
- 4.2. Հիմնադրամը պարտավոր է յուրաքանչյուր տարի հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային www.azdarar.am կայքում հրապարակել հաշվետվություն Հիմնադրամի գործունեության մասին, որը պետք է պարունակի տեղեկություններ իրականացված ծրագրերի, ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափի և դրանցում կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափի, հիմնադիրների, Խորհրդի անդամների, կառավարչի և Հիմնադրամի աշխատակազմում ընդգրկված անձանց անուններն ու ազգանունները, եթե նրանք օգտվել են Հիմնադրամի միջոցներից և ծառայություններից հաշվետու տարվա ընթացքում:
- 4.3. Սույն Կանոնադրության 8.3.1 և 8.3.2 կետերով նախատեսված անձանց, ինչպես նաև օրենքով լիազորված իրավասու պետական մարմինների պահանջով Հիմնադրամը պարտավոր է հնգօրյա ժամկետում նրանց ընձեռել Կանոնադրության, Կանոնադրության լրացումների և փոփոխությունների հետ ծանոթանալու հնարավորություն: Հիմնադրամը պարտավոր է այդ անձանց պահանջով տրամադրել նրան Կանոնադրության պատճենը: Վճարը, որը գանձվում է Կանոնադրության պատճենը տրամադրելու համար, չի կարող դրա պատրաստման ծախսերից ավելի մեծ լինել: Օրենքով լիազորված իրավասու պետական մարմիններին նշված փաստաթղթերը տրամադրվում են անվճար:
- 4.4. Հիմնադրամն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարում և ներկայացնում է հաշվապահական և վիճակագրական հաշվետվություն:
- 4.5. Հիմնադրամը պետական, սոցիալական, տնտեսական և հարկային քաղաքականության իրականացման նպատակով պատասխանատվություն է կրում փաստաթղթերի (կառավարչական, ֆինանսատնտեսական, աշխատակազմի մասին և այլն) պահպանման համար: Հիմնադրամն օրենքով սահմանված կարգով ապահովում է անհրաժեշտ փաստաթղթերի հանձնումը պետական արխիվային մարմիններին:
- 4.6. Հիմնադրամին աջակցող անձինք պարտավոր են չտարածել Հիմնադրամի գործունեության մասին գաղտնի տեղեկություններ և գերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վնաս պատճառել Հիմնադրամին կամ վերջինիս շահառուներին:
- 4.7. Անօրինական գործունեություն ծավալելու համար Հիմնադրամը և նրա պաշտոնատար անձինք կրում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

5. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

- 5.1. Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը Խորհուրդն է՝ բաղկացած 5 (հինգ) անդամներից:
- 5.2. Խորհրդի անդամ կարող են լինել 18 տարին լրացած գործունակ ֆիզիկական անձինք, այդ թվում՝ հիմնադիրները:
- 5.3. Խորհրդի անդամները չեն կարող լինել Հիմնադրամի այլ մարմնի անդամ:
- 5.4. Խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության՝ հասարակական հիմունքներով: Խորհրդի անդամների համար կարող է սահմանվել փոխհատուցում նրանց այն ծախսերի համար, որոնք կապված են Խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Փոխհատուցման վճարման կարգը սահմանում է Խորհուրդը:
- 5.5. Հիմնադրամի պետական գրանցումից հետո՝ եռամսյա ժամկետը լրանալու հաջորդ օրվանից, սկսվում են Հիմնադրամի հիմնադիրների միաձայն որոշմամբ նշանակված Խորհրդի առաջին կազմի 5 (հինգ) անդամների լիազորությունները, իսկ եթե նշանակվել են Խորհրդի բոլոր անդամները, ապա դրա հաջորդ օրվանից:
- 5.6. Խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը սահմանվում է 2 (երկու) տարի: Հիմնադիրների որոշմամբ Խորհրդի անդամները կարող են վերանշանակվել:

5.7. Հիմնադրամի Խորհրդի անդամներն իրավունք ունեն՝

- 5.7.1. առաջարկություններ ներկայացնելու Խորհրդի նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ,
- 5.7.2. նախապատրաստելու և Խորհրդի քննարկմանը ներկայացնելու հարցեր, առաջարկություններ և որոշումների նախագծեր,
- 5.7.3. ստանալու տեղեկություններ Հիմնադրամի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ, ծանոթանալու Հիմնադրամի բոլոր փաստաթղթերին,
- 5.7.4. ստանալու իր պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցում:

5.8. Հիմնադրամի Խորհրդի անդամները պարտավոր են՝

- 5.8.1. մասնակցել Խորհրդի նիստերին,
- 5.8.2. իրենց պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով Հիմնադրամի շահերից,
- 5.8.3. աջակցել Հիմնադրամում ֆինանսական և (կամ) նյութական միջոցների համալրմանը:

5.9. Հիմնադրամի Խորհրդի անդամի լիազորությունը դադարում է՝

- 5.9.1. Խորհրդի նախագահին տրված իր գրավոր դիմումի հիման վրա,
- 5.9.2. իր կողմից պարտականությունները պատշաճ կերպով չկատարելու դեպքում՝ Խորհրդի մնացած անդամների ընդհանուր ձայների թվի առնվազն 3/4-ով,
- 5.9.3. իր լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում,
- 5.9.4. դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով նրան անգործունակ ճանաչելու դեպքում,
- 5.9.5. նրա մահվան դեպքում:

5.10. Հիմնադրամի Խորհրդի անդամների ընտրության կարգը՝

- 5.10.1. Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տեղեկացված լինելու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում Հիմնադրամի Տնօրենը տեղեկացնում է Հիմնադրամի հիմնադիրներին և Խորհրդի նախագահին ու անդամներին:
- 5.10.2. Խորհրդի անդամի լիազորությունները դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է հիմնադիրների միաձայն որոշմամբ, ոչ ուշ, քան Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին Տնօրենի ծանուցումն ստանալու օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում:
- 5.10.3. Խորհրդի անդամին նշանակող երկու հիմնադիրներից որևէ մեկի մահվան, ծանր հիվանդության կամ որոշման ընդունմանը խոչընդոտող այլ հանգամանքների դեպքում Խորհրդի նոր անդամ նշանակվում է Հիմնադրամի երկրորդ հիմնադրի կողմից՝ սույն Կանոնադրության 5.10.2 ենթակետում նշված ժամկետում: Հիմնադրամի երկու հիմնադիրների՝ Խորհրդի նոր անդամ նշանակելու որոշման ընդունման միաժամանակյա անկարողության դեպքում Խորհրդի նոր անդամի նշանակում կատարում է Խորհուրդը՝ Խորհրդի անդամների ընդհանուր ձայների թվի 3/4 մեծամասնությամբ ընդունած որոշմամբ:
- 5.10.4. Եթե Խորհրդի բոլոր անդամների լիազորությունների դադարեցման դեպքում երկամսյա ժամկետում Խորհրդի անդամների կեսից ավելին չի նշանակվում, ապա ՀՀ Արդարադատության նախարարը երկամսյա ժամկետում նշանակում է 3 (երեք) անդամից կազմված ժամանակավոր խորհուրդ: Ժամանակավոր խորհուրդը պարտավոր է քայլեր ձեռնարկել օրենքով սահմանված կարգով Խորհրդի կազմի համալրման համար:

5.11. Ժամանակավոր խորհուրդն իրավասու է՝

- 5.11.1. իրականացնելու Հիմնադրամի գործունեությունը շարունակելուն ուղղված՝ օրենքով Խորհրդին վերապահված լիազորություններ,
- 5.11.2. եթե ժամանակավոր խորհուրդ նշանակելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, Խորհրդի անդամների կեսից ավելին չի նշանակվում, ապա ժամանակավոր խորհուրդը պարտավոր է դիմել դատարան՝ Հիմնադրամը լուծարելու համար:

5.12. Հիմնադրամի Խորհրդի իրավասությանն են պատկանում և չեն կարող փոխանցվել այլ մարմնի

- 5.12.1. Հիմնադրամի ռազմավարական ծրագր(եր)ի հաստատումը,

- 5.12.2. Հիմնադրամի կողմից իրականացվող (այդ թվում՝ անձամբ) ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
- 5.12.3. Հիմնադրամի բյուջեի և դրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և Հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը,
- 5.12.4. Հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը (ընդունվում է ձայների 4/5-ով),
- 5.12.5. Հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,
- 5.12.6. Հիմնադրամի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը (ընդունվում է Խորհրդի բոլոր անդամների կողմից միաձայն),
- 5.12.7. Հիմնադրամի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, լուծարման հաշվեկշռի հաստատումը (ընդունվում է ձայների 4/5-ով),
- 5.12.8. Հիմնադրամի Խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը (ընդունվում է ձայների 4/5-ով),
- 5.12.9. Խորհրդի նախագահի, Տնօրենի և Կանոնադրությամբ սահմանված այլ մարմինների ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին, ինչպես նաև Հիմնադրամի անվանման փոփոխության որոշումների ընդունումը (ընդունվում է ձայների 4/5-ով),
- 5.12.10. Հիմնադրամի Կանոնադրությամբ նախատեսված այլ մարմինների ձևավորումը,
- 5.12.11. Հիմնադրամի Կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր խմբագրությամբ Կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը (ընդունվում է ձայների 4/5-ով),
- 5.12.12. տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը (ընդունվում է ձայների 4/5-ով),
- 5.12.13. Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը,
- 5.12.14. Կանոնադրությամբ սահմանված պարբերականությամբ տարին մեկ անգամ Տնօրենի հաշվետվությունների լսումը,
- 5.12.15. Խորհրդի որոշումների կատարման ընթացքի վերահսկումը,
- 5.12.16. Հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը,
- 5.12.17. Հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,
- 5.12.18. Հիմնադրամի հաստիքացուցակի հաստատումը,
- 5.12.19. օրենքով, սույն Կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև Հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:
- 5.13. Խորհրդի վերոնշյալ որոշումներն ընդունվում են Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե ձայների ավելի մեծ քանակ սահմանված չէ սույն Կանոնադրության 5.12 մասի ենթակետերով:
- 5.14. Հիմնադրամի Խորհրդի որոշումները**
- 5.14.1. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Հիմնադրամի Խորհրդի նիստերում Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Հիմնադրամի Խորհրդի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում է Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ, բացառությամբ սույն Կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:
- 5.14.2. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել այլ հիմնադրամի հետ միացման կամ միաձուլման ճանապարհով: Հիմնադրամի վերակազմակերպումը կարող է կատարվել հիմնադիրների միաձայն որոշմամբ և Խորհրդի անդամների ընդհանուր ձայների թվի 4/5 մեծամասնությամբ:
- 5.14.3. Եթե Հիմնադրամի Խորհրդի նիստում քննարկվում է Հիմնադրամի Խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր,

- ամուսնու ծնող, գավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա Հիմնադրամի Խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:
- 5.15. **Հիմնադրամի Խորհրդի նախագահն** ընտրվում է Խորհրդի անդամների կազմից՝ Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ իր անդամների ընդհանուր ձայների թվի 3/4-ով: Խորհրդի նախագահը՝
- 5.15.1. կազմակերպում է Խորհրդի աշխատանքները, անհրաժեշտության դեպքում կարող է կազմավորել Խորհրդի ժամանակավոր հանձնախմբեր,
 - 5.15.2. գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում դրանք,
 - 5.15.3. կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրության վարումը,
 - 5.15.4. Խորհրդի անդամի կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում Խորհրդի քննարկմանն է ներկայացնում Խորհրդի տվյալ անդամի լիազորությունների դադարեցման հարցը:
- 5.16. Հիմնադրամի Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները, Հիմնադրամի Խորհրդի որոշմամբ, կատարում է Խորհրդի անդամներից մեկը:
- 5.17. **Հիմնադրամի Խորհրդի նիստերը**
- 5.17.1. Գումարվում են ոչ պակաս, քան տարին երկու անգամ՝ Խորհրդի նախագահի կողմից՝ Խորհրդի անդամներին և հիմնադիրներին տրամադրելով նիստի օրակարգը ոչ ուշ, քան նիստից 5 (հինգ) օր առաջ:
 - 5.17.2. Խորհրդի նիստեր կարող են հրավիրվել նաև Խորհրդի անդամների 1/3-ի պահանջով՝ Խորհրդի նախագահի կողմից՝ համապատասխան պահանջը ներկայացնելուց 30 օրվա ընթացքում: Եթե նշված ժամկետում Հիմնադրամի Խորհրդի նախագահը նիստ չի հրավիրում, ապա նիստ կարող են հրավիրել նման պահանջ ներկայացրած անդամները:
 - 5.17.3. Հիմնադրամի Խորհրդի նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման կարգով:
 - 5.17.4. Հիմնադրամի Խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրում են տվյալ նիստին մասնակցող Խորհրդի բոլոր անդամները: Արձանագրությունները կազմվում են հայերենով՝ նշելով՝ նիստի գումարման ամսաթիվը և վայրը, նիստին մասնակցած անձանց (այդ թվում՝ Տնօրեն) քանակը, անունները, Հիմնադրամում զբաղեցրած պաշտոնը, նիստի օրակարգը: Արձանագրությունը պետք է պարունակի նիստում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, նիստի ընդունած որոշումները:

6. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԸ

- 6.1. Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Հիմնադրամի Գործադիր տնօրենը (այսուհետ՝ Տնօրեն):
- 6.2. Հիմնադրամի Տնօրենի իրավասությանն են պատկանում Հիմնադրամի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը: Հիմնադրամի Տնօրենը կազմակերպում է Խորհրդի որոշումների կատարումը:
- 6.3. Հիմնադրամի Տնօրենն ընտրվում և պաշտոնից ազատվում է Հիմնադրամի Խորհրդի կողմից: Տնօրենի պաշտոնում առաջին նշանակումը կատարվում է հիմնադիրների միաձայն որոշմամբ:
- 6.4. Հիմնադրամի Տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Օրենքով, սույն Կանոնադրությամբ և նրա հետ կնքված աշխատանքային պայմանագրով: Հիմնադրամի անունից պայմանագիրը ստորագրում է Խորհրդի նախագահը կամ Խորհրդի կողմից լիազորված այլ անձ:
- 6.5. Հիմնադրամի Տնօրենը՝
- 6.5.1. տնօրինում է Հիմնադրամի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Հիմնադրամի անունից, ընդ որում Տնօրենի կնքած գործարքներն իրավական ուժ ունեն միայն Տնօրենի (կամ նրա կողմից լիազորված անձի) ստորագրության և Հիմնադրամի կլոր կնիքի առկայության դեպքում,

- 6.5.2. ներկայացնում է Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,
- 6.5.3. Հիմնադրամի անունից գործում է առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր,
- 6.5.4. սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
- 6.5.5. բանկերում բացում է Հիմնադրամի հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ,
- 6.5.6. Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և Հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, Հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը,
- 6.5.7. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
- 6.5.8. սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Հիմնադրամի աշխատակիցներին, այդ թվում՝ Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ղեկավարներին ու աշխատողներին,
- 6.5.9. աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:
- 6.6. Հիմնադրամի տնօրենը այլ կազմակերպություններում կարող է վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն Խորհրդի համաձայնությամբ:
- 6.7. Խորհուրդն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծարել Տնօրենի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը՝ օրենքով, սույն Կանոնադրությամբ և տվյալ պայմանագրով սահմանված կարգով:

7. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

- 7.1. Հիմնադրամն իրավունք ունի օրենքին և իրավական այլ ակտերին համապատասխան ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ, ակումբներ, հանձնաժողովներ և այլ մարմիններ: Օտարերկրյա պետություններում առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումն իրականացվում է այդ երկրների օրենքներին և իրավական այլ ակտերին համապատասխան, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:
- 7.2. Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանման կամ հիմնարկի անվանումը պետք է պարունակի Հիմնադրամի անվանումը:
- 7.3. Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ղեկավարները նշանակվում են Հիմնադրամի Տնօրենի կողմից և գործում են նրա կողմից տրված լիազորագրի հիման վրա:
- 7.4. Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ենթակա են հաշվառման:

8. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԵՆՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 8.1. Հիմնադրամը՝ որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:
- 8.2. Հիմնադրամի սկզբնական միջոցներն են հիմնադիրների կողմից ստեղծման պահին փոխանցված նյութական և (կամ) ֆինանսական միջոցները:
- 8.3. Հիմնադրամի գույքի և միջոցների ձևավորման աղբյուր կարող են լինել՝
 - 8.3.1. հիմնադիրների ներդրումները,
 - 8.3.2. ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները,
 - 8.3.3. դրամական մուտքերը պետական բյուջեից,

- 8.3.4. դրամաշնորհները,
 - 8.3.5. Հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,
 - 8.3.6. հանգանակությունները՝ միջոցներ, որոնք ստացվում են դրանց կուտակմանն ուղղված գործունեությունից (մշակութային, սպորտային, զվարճալի և այլ միջոցառումների միջոցով գումարների հայթայթում),
 - 8.3.7. օրենքով չարգելված այլ միջոցներ:
- 8.4. Հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ իր հիմնադիրների, Հիմնադրամի մարմինների անդամների, ինչպես նաև Հիմնադրամի աշխատողների, բացառությամբ աշխատողների աշխատավարձի և Հիմնադրամի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ փոխհատուցման ենթակա ծախսերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ Հիմնադրամի հիմնադիրները, Հիմնադրամի մարմինների անդամները, ինչպես նաև Հիմնադրամի աշխատողները հանդիսանում են սույն Կանոնադրությամբ նախատեսված շահառուներ:
- 8.5. Հիմնադրամի գույքը և ծախսերն առավել արդյունավետ կառավարելու նպատակներից ելնելով՝ Խորհրդի որոշմամբ կարող են ստեղծվել հատուկ նպատակային ֆոնդեր, որոնց Հիմնադրամին տրամադրած միջոցներից կարող են կատարվել հատկացումներ:

9. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 9.1. Լուծարումը Հիմնադրամի գործունեության դադարումն է՝ առանց նրա իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:
- 9.2. Հիմնադրամը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումով:
- 9.3. Հիմնադրամը կարող է լուծարվել, եթե՝
- 9.3.1. Հիմնադրամի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ,
 - 9.3.2. իր գործունեությամբ Հիմնադրամը շեղվել է Կանոնադրությամբ նախատեսված նպատակներից,
 - 9.3.3. հնարավոր չէ հասնել Հիմնադրամի նպատակներին և հնարավոր չէ կատարել այդ նպատակների փոփոխություններ,
 - 9.3.4. Հիմնադրամի գործունեությունը վտանգում է պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները,
 - 9.3.5. Հիմնադրամը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ,
 - 9.3.6. Հիմնադրամն ստեղծելիս հիմնադիրները թույլ են տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ:
- 9.4. Դատարանի կողմից Հիմնադրամի լուծարման մասին որոշում ընդունելուց հետո Խորհուրդը նշանակում է լուծարման հանձնաժողով (լուծարող) և ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի և «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ սահմանում է լուծարման կարգը և ժամկետները:
- 9.5. Հիմնադրամի լուծարմամբ պայմանավորված պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին Հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, Հիմնադրամի մնացած գույքն ուղղվում է սույն Կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարության դեպքում փոխանցվում է պետական բյուջե:
- 9.6. Հիմնադրամի լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը դադարած՝ Հիմնադրամի լուծարման պետական գրանցման պահից: